

ԲԱՃԱՆՈՐ՝ ԱԳՐՈՒԹԻՒՆ	
ոչխորոյ համար	
Տարեկան	12 ծր.
Վեցամսեայ	6 »
Արտասահմանի համար	
Տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »
ՆԱԵՐԿԱՅԻ համար	
Տարեկան	3 ծր.
Վեցամսեայ	1.50 »
ԿԱՆԻՔԻ ՎՃԱՐՆԵՐ	

Իստանբուլի սոցիալական կուսակցության համար 40 սանթիմ կ. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ կ. երեսին առանց անգանակներու համար 20 ժողովուրդ կրկնայ:

Պաշտոնային համար ձեռքի (Գ Ի Ն 15 Ս Ա Ն Թ Ի Մ)

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՈՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Նախակ եւ դրամ գրկնչ
Խմբագրութեան հասցիկն
—
Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.
Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

Պրոսպեկտի հս չեն տրուիր
Արտասահմանի համար ձեռքի (Գ Ի Ն 20 Ս Ա Ն Թ Ի Մ)

ՀՐՋՎՈՒՄ Է

Հայաստանի ամեն անկիւնում թագաւորում է սովը. թորք կառավարութեան ձեռքով ստեղծված սովը, որը Սուլթանի սրին փոխարինելով անձայն անշնչակ կոտորում է հային կամ ֆիզիքապէս կամ բարոյապէս: Հայը անթութիւնից կամ մեռնում է կամ հաւատն ու ազգը փոխում, կամ իր զաւակներին թուրք պէյերին ծախում. չէ Կիմանում նոյնիսկ քաջարի զէյթունցին: Ի՞նչ սոսկալի պատկեր. ի՞նչ պատմական ահաբեկ ոճրագործութիւն և բարբարոս Սուլթան Համիտի ձեռքով, այն Համիտի՝ որի հետ հաշտութիւն են քարոզում մեր չը գիտեմ ինչ հայրենասէրները:

Հայաստանը սովամահ է լինում. և այդ սովը արւեստական, Սուլթանի ձեռքով ստեղծված սով է. ուրեմն անվերջ, մշտական՝ քանի հայը գոյութիւն ունի իբր սուլթանների հպատակ և գեռ չէ

ազատվել: Ի՞նչքան կուղէք զրամ թափեցէք հաց գնելու այդ սովամահների համար, հայերը կրկին անթի պիտի մնան, Հայաստանում կրկին սովը պէտք է թագաւորէ, որովհետեւ Սուլթան Համիտը այդպէս է ցանկանում, որովհետեւ սրի տեղ սովով բնաջինջ անելը աւելի յարմար է Սուլթանի համար. այլևս չի համարձակվում կոտորել, այլևս չի համարձակվում ազմուկով սպանել հայերին. այլ լռիկ մնչիկ...

Ու հայութեան այս լռիկ սպանումը, մահացումը և շնչումը աւելի քստմնելի է քան կոտորածներովը:

Տեսէք ի՞նչ սոսկալի սղբերգական պատկեր է հանդիսանում հայրենիքում—մի տեղ անթութիւնից փրփրած հայեր թուրք են դառնում, միւս տեղում հարիւրներով ի մի խմբված—քահանայով խաչով ու խաչվառով—սովից դալկացած՝ դիմում են դէ-

պի եփրատ իրենց կեանքին վերջ տալու, իսկ միւս տեղում հայրերը իրենց գեռափթիթ աղջիկներին ու աղաների ձեռքերից բռնած՝ մի քանի սակիով վաճառում են վաճառ թուրք պէյերին:

Ու մեծ մարգասպանը հրճվում է իր սակեպատ որջի մէջ. որովհետեւ հայը շնջվում է առանց ձայնի ու ազմուկի...

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

4. ՊՈՒՍ, 28 Ապրիլ

Ապրիլ 25ին գիշերը Օրմանեան ուրախութենէն չի կրցաւ քնանալ, Խեղճ մարդը այս վերջին երեք շորս շարաթը տխրութենէն, սրտի թախիժէն ու կսկիժէն չէր կրնար քնանալ... Օ՛, դիւրին բան չէ Պատրիարքական աթոռի մը ձեռքէ ելլալը տեսնել, մանաւանդ երբ կղզաս որ մէկ հատիկ անխոհեմ քայլդ էր ասոր պատճառը, քու ձեռքով գրած

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԶԲՕՍԱՆՔ

ԽՍՐԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՍԸ

«ՍԱՐՍԻ» ՍԷՋ

«Մարս» մոլորակին մէջ բնակող հայ բարեկամներէն մէկը, որ մեր աշխարհը գտնուած աստիճան Հայաստանի փրկութեան գործին համար օգտակար ծառայութիւններ մատուցած էր, քանի մը օր առաջ ինծի գրկած էր «Մարս» մէջ հրատարակուող «Ազգ. Տեղափոխական կուսակցութեան» պաշտօնաթերթ «Պատերազմ»ի ներկայ տարուան ապրիլի երկու թիւերը, ուր Օրմանեանի ուղղուած սպառնադրին առթիւ խիստ շահեկան յօդուածներ կային:

«Ազգ. Տեղափոխական կուսակցութիւնը», կը գրէ մարտի բարեկամս, կազմուած է տեղւոյն հայերէն և նպատակ ունի ընդհանուր պատերազմի միջոցաւ Հայաստանը իր այժմեան դերքէն տեղափոխել Մարսի մէջ: Ա-

սոր համար, ստիպուած ըլլալով բնական ուժերու դէմ ալ մաքառել, երկնային ու երկրային քաղաքականութեան ու գիւտնագիտական գաղտնիքներու քաջ ծանօթ, խոհեմ, ճարպիկ և աշխուրջ կեդր. Վարչութեան մը շնորհիւ, տարիներէ հետէ՝ անեղ պատրաստութիւններ կը տեսնէ երկրաբանական ու քաղաքական այդ փոփոխութիւնը յեղակարծուտ իրականացնելու համար: Ասիկա ձեռք Լոնտոնի Ազգ. պաշտպանութեան կեդրոնին մէջ, մասնաճիւղն է, որուն յանձնուած է երկնային գիւտնագիտական գործունէութիւնը:

Պատերազմի այդ երկու թիւերը ինծի գրկող անձը հետեւեալ մանրամասնութիւնները կաւեցնէ անոնց մէջ պարունակուած երկու յօդուածներու վերաբերմամբ:

«Գանի մը շարաթ առաջ, օր մը Մարսի «Սըլանտիս» ֆազիւնոյին մէջ նստած էինք «Պատերազմ»ի խմբագիրներուն հետ: Օրուան գէպքերուն—ասիկ անկէ խնդիրներու վրայ կը խօսակցէինք երբ շուշապի-յիզափոխական խմբագիրը քաղիւնոյն ներս մտաւ, ու գէպի մեղ գալով.

—Բարեկամներ, ըսաւ, հինգ տարիէ ի վեր այսօրուան չափ ուրախացած չէի:

—Ի՞նչ կայ, խե՛ր է, հարցուցինք ամէնքս մէկ:

—Թայիլ կարգացի՞ք, ժընէվցիներուն նոր մէկ խնթութիւնը կայ մէջը. ճիշդ հարուածելու առիթն է: Արթին փաշայի սպառնադիր մը զըրկեր են, ուր Օրմանեանի հրաժարումը կը պահանջեն. եթէ չի հրաժարի, Տիրի պիտի ենթարկենք ըստեր են: Հիմա այս աներեւաններուն աղւոր դաս մը տալու է. թո՛ղ անոնք ալ տեսնեն թէ մեզի հետ խաղալու չելլուիր: Որի՞ կը պոռանք կոր չորս տարիէ ի վեր թէ մենք աստիճան իրարանցումներու պէտք չունինք: Պատրիարքին ալ սասակի, իրենք ալ, Նորէն Պօլի՛սը տակն ու վրայ ընել:

—Եթէ իբրացնէ աստիճան խնթութիւն մը ըրեր են, աւելցուց խմբագիրներէն մէկը, բնաւ սպասելու չէ, ուժով յօդուած մը պէտք է տաք տաք գլխունն իջեցնել. ալ վնք կրնար համբերել:

—Բան մը զրկու է, աւելցուց Պ. Սըլանտեան որ «կեդրոն»ին գիւտնագիտական բաժնին պէտ, ու միանգամայն շուշապի խմբագրին անձնական քարտուղարն էր, բայց խոհեմութիւնը ու ողջմտութիւնը ձեռքէ ձգուել չէ. պէտք է գիւտնագիտու-

մէկ հրաժարականդ էր... Ու անցեալ ամսուան երկար գիշերները, Օրմանեան իր աչքերը չէր կրնար փակել, ու կը նոյզէր ան շարաքատիկ վայրկեանը յորում այդ դժբաղդ հրաժարականը գրեց... «Ի՞նչ պէտք ունէի աստոր, հանգիստ կերպով շարունակէի աթոռիս վրայ նստիլ ամսականներս... նուէրներս... ստանայի... խէրն ալ անիծեմ ժողովրդին ու ազգին». աս կը մտածէր Օրմանեան Ալի փաշան իր առ զղման դառն վայրկեաններուն:

Բայց ապրիլ 25ին տեսարանը փոխուեցաւ:

Սեպուհ էֆ. Տէմիրճիպաշեան և Տիգրան էֆ. Երուսթեան, Տիգրան Տէր Ներսէսեան առաջակին հետ միասին ժողով մը կը կազմեն Պատրիարքարանի մէջ, որու կը մասնակցին նաեւ Բարթոլոմէան էֆ. փոխանորդ. ձէվահիր-ճեան և այլ քանի մը կրօնական ու աշխարհական անձեր:

Ժողովականներէն մին խօսք կուղէ և հետեւեալը կը ըսէ.

Թեմար գրիւ, Վերջապէս կուսակցութիւն մըն է ան ալ, ժողովրդին մէջ իր արմատներն ունի. կրնայ մեզի դէմ հակակրօնութիւն ու վայրոյթ առաջ գալ:

—Ի՞նչ ատ գործը ինծի ձգէ, մէջ նետուեցաւ անմիջապէս շուշապի-յիզափոխական խմբագիրը. մեր առջեւ հրաշալի ուղեցոյց մը ունինք արդէն: Հիմա կերթանք մեր լոնտոնցիներուն «Մարս»երը կը բերենք. որքան ազգու հատուածներ գտնենք ժընէվցիներուն դէմ, մեր թերթին մէջ կանցնենք:

—Կէս ժամ ետքը յօդուած մը պատրաստուած էր. «Նոր դաւաճանութիւն մը» վերնագրով, Բոլոր խմբագիրները հիացած էին. հազիւ թէ մէկը համարձակած էր դիտողութիւն մը ընել յարձակումը ծանր նոյնիսկ, ինչ ինչ կէտերու մէջ անիրաւ համարելով:

—Ճանաչմ, մեր փնտածը ի՞նչ է, որոտած շուշապի-յիզափոխականը, հարուածել, հարածել, նախատել ժընէվցիները, Մենք իրաւացիին, անիրաւին չի պիտի նայինք, Հարուածը ուժով է, այդպիսի կը բաւէ:

Յօդուածը սպաղարուեցաւ, Երկու օր ետքը, դարձեալ Սըլանտիսի մէջ հաւաքուած էինք, երբ շուշապի-

«Մեզմէ շատերը դէմ են Օրմանեանի մտայնութեան, զայն աղէկ մարդ չեն համարեր են. բայց ասօր, երբ Օրմանեան «պատճառաբանեալ» հրատարական մըն է սուեր, հրատարական մը, որու «պատճառները» մեր ամէնուս սրտին մօտիկ են ու թանկագին, որովհետեւ մեր ժողովուրդի շահերու պաշտպանութեանը կը ծառայեն» ասօր այդ տեսակ պատճառներու համար հրահրող մարդ մը մենք մինակ թողնելու չենք. մեր բարոյական պարտքն է զայն պաշտպանել գէթ յանուն ատպատճառներու»:

Աս առաջարկը կը շարունակուի և կը շարունակուի թուրքերէնի դիւանապետ Էֆէնտիին խմբագրել հետեւեալ մտքով ուղերձ մը առ Կարմիր Սուլթանը.

«Մեր ազգային գործերը քայքայման մէջ են, ոչ մէկ գործ կանոնաւոր կընթանայ, որովհետեւ Պատրիարքնիս հրատարած է. Կը խնդրենք Վեհափառութեանէդ անոր հրատարականին պատճառները ուղղորդութեան ստանել և մեր աս անկանոն վիճակին վերջ մը դնել»:

Անկասկած աս մասնաւոր դուժարութիւն արդիւնքը իսկոյն հաղորդուեցաւ Օրմանեանի և աս պարտաւար երեքշաբթի գիշեր ուրախութեան չի կրցաւ քնանալ:

Տարօրինակ երևոյթ, Պօլսոյ մէջ ամէն հասկացողութիւն և գաղափար տակն ու վրայ ելեր են. Ամէնէն անբարոյական անձեքրաբանութեան արպար կը գիտուն:

Գաւառներէն սրտամոլիկ լուրեր կը հասնին. Պատրիարքա-

րան եկող տեղեկագիրները լեցուն են սարսուցեցող փաստերով. Աղքատութիւնը աներեւակայելի չափերու հասած է. Սովը լռելայն կը թաղաւորէ. Ստամբուլի սպանիչ կարիքը օրաօր կը բազմապատկէ անբարոյականութեան փաստերը. Աղքատացողը միայն հայը չէ այլև բոլոր միւս ցեղերը:

Ձինուած ցեղերու աղքատութիւնը կանգնէ մասնաւոր աւազակութեան ու թալանի գործը կառավարութեան հսկայական աւազակութեան քովէն ու անոր հետ մէկտեղ. Ամէնէն պոգաչի երեւոյթները տեղի կունենան Վանայ, Սղերաի և Կիլիկիոյ կողմերը. Հոս լրագրիւններուն պաշտօնապէս արգիլուեցաւ Վանայ ներսէս Եպիսկոպոսին անունը գրել և անոր ըրած կարգադրութիւնները յիշատակել...:

Ձէյթունի գիւղերէն մէկուն մէջ գիւղացիները չի դիմանալով սովին, կառավարութեան հրէջաւոր հարկերուն, ստիպուեր են «իրենց մանչ ու աղջիկ զաւակները» թուրք պէյերուն ծախել:

Ձէյթունի տեղեկագրութեան այս փաստին վրայ՝ նպատակը յանձնաժողովը իսկոյն որոշեց 50 ոսկի զրկել աս գիւղը. Կաթիլ մը, սպանիչ թշուառութեան Ովկիանոսին մէջ... 50 ոսկի չէ պէտք. այլ 50 հրացան. Ե՞րբ պիտի ըմբռնեն մեր գովէչի կաշի ունեցող հարուստները աս պարզ ու փայլուն ճշմարտութիւնը:

ԲՅԺ

—(—)

ՆԱՐԷՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ԿԸ ԽՆԴԻՆ

Ձեմ գիտեր թէ այս քանի՞ երրորդ անգամն է որ Պ. «Գիտող» «Շարժում»ի միջոցաւ Պուրկաղի թշուառ հայաստանցիներուն համար օգնութեան ձեռք կարկառելու կոչ կընէ ու անարձագանք կը մնան անոնք. Իրօք շատ արթնութեամբ մըն է այս մեռելական անտարբերութիւնը, և հետեւապէս մեծ ամօթ. Չարմանալի հասարակութիւն մըն ենք. այն ատեններ՝ ուր և ոչ մէկ տեղէ նպատակ կոչ չի կայ, կամ մեր օժանդակութեան, գործակցութեան գիւտողներ չեն ըլլար. ամենքս ալ խօսքով ազգասէրներու, կեղծ բարեբարներու, ազգային պարտականութիւն ճանչցողներու, աս ու ան քննադատելու հովեր կառնենք և կոկորդիլոսի արցունքներով ազդին կայտնութեան վրայ կողբանք. Իսկ երբ կարգը կուգայ գործնականին, ահա՛ այն ատեն է որ կեղծ քննադատները բոլորն ալ հրապարակէ կը քաշուին, կը մեկուսանան. մեծ մաս մը իրենց անձնական ճղճիմ հաշիւներուն. կոյր կիրքերուն կը զոհեն ամենէն գերագոյն պարտականութիւններ, ուրիշներ իրենց անտարբերութիւնը սքողելու համար ինքզինքնին չեղք կը հոչակեն և պարտականութենէ խոյս կուտան. և դեռ ասոնց քանի՞ քանի՞ տեսակներ յիշեմ. Կը հասկնամ կիրքի ազդեցութիւնը, ու գիտեմ թէ անիկայ որքան զղուելի գերունի անհատական գործերու մէջ. Բայց երբ խնդիր մը որ հանրային գոյն ունի, երբ, օրինակի համար, մեր խումբ մը եղբայր-

ները փրկելու, սովամահ ըլլալէ ազատելու կը վերաբերի, հոգ ալ կը հասնի այդ կիրքը, անտարբերութիւնը. Եւ ամենէն աւելի աչքի զարնող յատուի երեւոյթ մըն ալ սա է որ, թողլով ուրիշ շատ մը գէպերը, նոյն իսկ մեր քթին տակը Պուրկաղի բնականիւրներուն մէջ ճարակած խնդրութիւնն ու անօթութիւնը արձանագրելու, յայտնուիլուն ուղղութիւնը գէպի հոն հրաւիրելու համար ամէն թերթի որ սինակները չը բանար, չեմ գիտեր ինչ նկատուեցերով...:

Ուրիշ ու շարաւ պարագայ մըն ալ կայ. մեր կուսակցականները փոխանակ յուզուած խնդրին «նրք պատակը» ու «կարեւորութիւնը» «ճշմարտութիւնը» ու անկեղծութիւնը աչքի առջեւ ունենալու այդ խնդիրը յուզող թերթի անունով կը հետաքրքրուին—այս ինչ խնդիրը ո՞ր թերթի յուզեց—հոգ չէ թէ անիկայ ամենակարեւոր բան մըն է. —հը ականջ կախելու բան մը չէ և այլն. Խեղճ արամաբանութիւն:

Բանի մը շարաթ առաջ Պ. «Գիտող»ի ըրած հրաւերին անհրաժեշտութիւնը չեղտած էի այս էջերուն մէջ, ու ի միջի այլոց ըսած էի թէ սրտեղէ որ Պուրկաղի բնականիւրներու օգնող մարմնի մը գոյութիւնը իմանամ իմ կարողութեանս չափով համեստ գումարիկ մը պատրաստ եմ արձանագրելու. Պ. «Գիտող» իր այս վերջին գրութիւնով Պուրկաղի մէջ Աղքատախնամի մը գոյութիւնը կը հաստատէ որ ստանձնած է բեռնակիրները սիրտիւր հոգը, և այս առթիւ կը գրուած անոր ըրած ջանքերը. Արդ ամեն մասամբ վստահելի և նպատակայարմար կը գտնեմ

խմբագիրը ներս մտաւ. Բայց այս անգամ իր դէմքը նախորդ օրուան դիւանապետ հրահրանքը չէր արտայայտուեր. Թանձր ու ցցուած յոնքերուն տակ փոսացած ճիւղերի աչքերը թակարդի մէջ բռնուած աղուէսի մը նմանաւոր ցոլքերը կարտայայտէին. Իր կարծ հասակը լայն վերարկուն ու իր մտայն դէմքը բոլորածեւ մօրոճքին մէջ ամփոփած՝ կը յառաջանար մտազբաղ. Երբ մտեցաւ մեզի.

—Ուստի ըրինք. քանի մը օր ալ սպասելու է եղեր. ժընէվցիներուն սանկ նանկ կըսենք, բայց մենք ասոնց չափ ալ չիկանք.
—Բայց ի՞նչ կայ, ի՞նչ պատահեցաւ հարցուցինք ամէնքս մէկ.
—Գրելու չէր, սպասելու էր. գէշ եղաւ. գէշ, կը կրկնէր ան խելքը կորսնցուցած մենախօսի մը պէս:
Գանի մը վայրկեան լուրթնէ կտըր.

—Բարեկամներ, ըսաւ վերջապէս, գրութիւննիս շատ բարդ ու կնճառ է. ինչպէս մէջն պիտի ելլենք չեմ գիտեր. Ատ անիծեալ սպառնազրը տուողները մեր Բիւզանդիան մասնաճիւղին լակոտներն են եղեր:
—Եղբայր, աս է նէ, հոգ մի ընեք, մէջ նետուեցաւ Պ. Արթուրեան, ուրիշ յօդուած մը կը գրենք, կը գո-

վենք սպառնազրը, ուզածուս պէս կը մեկնենք, կը լմնայ կիրթայ. Առջի գրածնիս որին միտքը մնաց. հարիւրին հինգը եթէ հաւատայ, կը բաւէ. Իսկ կուզէ նէ թող ոչ ոք հաւատայ. Ի՞նչ կը կորսնցուցենք:

Որոշուեցաւ երկրորդ յօդուած մը գրել «ճշմարիտ յեղափոխութիւնը» վերնագրով:

Երկուքն ալ «Պատերազմէն արտագրելով կը զրկեմ Շարժումի, որ պէս զի ժողովուրդը կարգայ ու գաղափար ունենայ Մարտի «Պատերազմ»ի ուղղութեան վրայ:

ՇԱՀԱՊ

Ահաւաստիկ առաջին յօդուածը՝

Ս.

ՆՈՐ ԳՆԻՍՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Այս օրերս Պօլսէն մեր մոլորակը հասած հեռագիր մը կը ծանուցանէր թէ ժընէվցիներուն վերջերս հոս զըր կամ մէկ քանի գործակալները սպառնական նամակ մը տուած են Սրթին փայտին, ուր իր և Օրմանեանի հրատարակած կը պահանջեն, հակառակ պարագային մահ սպառնալով. Այդ սպառնազրին մէջ ժընէվցիները

կըսեն թէ՛ երբ «Նորին Վսեմութեան» մասնութեամբ երեւան հանէ նամակը ու մեր ազգակիցներուն «նորէն շարժարան»ի ու հաւանքի ենթարկուելու պատճառը գտնուայ, մահ պիտի ըլլայ իր պատիժը:

«Պատերազմ»ի խմբագրութիւնը ժընէվցիներուն այս նոր շահատակութիւնը իմանալով, չի կրցաւ իր արդար զայրոյթը զսպել և որոշեց ամէն գնով կասեցնել ասոնց գործունէութիւնը, քայքայել զանոնք. մերկացնել անոնց դաւադրութիւնները և միանգամ ընդ միշտ ազատել մեր դժբաղդ ազգը այդ կարգի ոճրագործներու ձեռքէն:

Այս հաւատարմով ոգեւորուած՝ կուսակցութեանս կեդր. վարչութիւնը Ս Վեռտարանը բերելով, իր շուշտակ-յեղափոխական խմբագրականներու կայտնութեան, յոտնկայս երդում ըրաւ յանուն հոյ ազգին, հաւատարիմ մնալ իր այս սկզբունքին և ամէն ճիգ թափել քայքայման այս գործը փութացնելու համար: Այս իմաստով «Ազգ. Տեղափոխական կուսակցութեան» կեդր. վարչութիւնը իր բոլոր մասնախմբերուն պէտքերը հրահանք տուաւ, որպէս զի իրենց շըրջանակին մէջ գործեն կեդր. վարչու-

թեան ոգւոյն և ուղղութեան համաձայն, ուրկէ կախում ունի մեր գրքազ ու բաղամաշարք ազգին ապագան:

Ժընէվցիներուն անցեալ ողորմելի գործունէութիւնը արդէն ամէնքուս յայտնի է. ըրին չըրին ազգին արին թըցնել տուին. Մինք հազար անգամ առիթ ունեցանք անոնց ըրածները մէկիկ մէկիկ խնդրելու, և ցուցուցինք թէ երկու պօմպա, երեք հրացան փոխադրելով, պաշտօնատուն մը կոխելով կամ դրամատան մը տիրանալով ազգը չենք կրնար փրկել. Եթէ խնդրը ատոր մնար, կուսակցութիւնս Վառնայէն հաւիթ փոխադրելէ աւելի դիւրութեամբ պօմպաները Պօլսի մտցնելու կամ Շիր-ֆէրի-Նիւայրիի շոգենաւ մը մտնելու անիջողներ գիտէ. Բայց չընեք, որովհետեւ գիտէ, համազուած է թէ ատորք յեղափոխութեան համար անպատուաբեր և ազգին համար ալ աւելի վտանգաւոր քայլեր են:

Եւ մինչդեռ մենք այս գաղափարները կուզէինք մեր ժողովրդին ու չիմ մասին մէջ տարածել հետզհետէ, ահա այդ թեւեղացիները յիմարտութեան եղակին ապացոյցը կուտան Պատրիարքին՝ սպառնազրի մը զրկ-

գոյանալիք լուծանքը զրկուի այդ Աղքատախնամին . ուստի պիտի խնդրենք Պ. «Իրապետ»-ին որպէսզի հաճէր Աղքատախնամին որոշ հասցէն հրապարակաւ իմացնել :

Պէտք է համոզուինք ամենքս ալ թէ մեր տուած լուծանքէն պիտի օգտուին Մայր Հայրենիքի դաւաճներուն մէկ մասը , որոնք ձեռքը պարագաներու բերմունքով կը հիւծեն թշուառութեան մէջ , մեր քովիկը : Ո՞ր անկեղծ հայը , ո՞ր հայ հարուստն ու վաճառականը , ո՞ր էսնափը չը լսելու պիտի տայ անտէրունջ հաստատանցին երուն ազերսանքները . հայաստանցիներ՝ որոնք մշտական սխնեմ են մեր մայր երկրին :

Սեն անկեղծ հայու ուշադրութիւնը կը հրաւիրենք :

Յ. Ս.

Ֆիւրիպէ , 27 Ապրիլ

ՈՐԲԵՐՈՒ ԱՆՈՒՆԸ ԿԵՂ- ՍՄԱՌՆԵՐՈՒ ԲԵՐՆԻՆ ՄԷՉ

Ի՞նչ լրբութիւն , ըսաւ պարզ արհեստաւոր մը , ծանօթ . . . երկկեղուեան թերթին 30 թիւին խմբագրականը կարգալէ յետոյ՝ որբերու անուանն ալ գիմակի տեղ կը գործածեն ասոր անոր գէժ կիրք յագեցնելու համար : Յաւալին այն է որ , մեր քանի մը անորակելի հրապարակագիրները կամ խմբագիրները իրենց յիմարտութիւնները չեն անսներ , կամ չիտեսնալ կը կեղծեն , ու իմաստակ և անպատկառ գրուածքներ կը հրամցնեն ընթերցողներուն , զանոնք ապուշի տեղ դնելով :

— Է՛հ , ըսի , արտասահմանի խմբագիրներէն քանի մը հատը

«մօտա» ըրած են ամեն նուիրական անուն , սիրուն բառ ծամծամել , իրենց անձնական հաշիւներուն գործածել , բառական է որ , անգամ մը , այդ փայլուն բառերով , զգացումով կառավարուող միամիտ ամբոխին զգացումներուն սանձը ձեռք ձգեն , ալ անկից վերջը ուղած կողմերին կը քաշեն , ամէն խայտառակ միջոցներու կը դիմեն : Հարւարուոր օրինակներուն մէջէն և մեզի ամենէն մօտիկներէն հաս մը յիշեմ . — մտքա՞ք , ըսի , անցած աւուր Բաղէն զրկուած նամակ մը , զոր դուք ինձ ցոյց տուիք նողկանքով , որ հրատարակուած էր նորէն այս թերթին մէջ : Դուք ալ դիտէք որ Վարդօն անձամբ չի գովեց Գալֆաները , երկու կողմի հակառակ թղթակցութիւններ ալ սիրով հրատարակեց , և է՛ն վերջը ինք երկուողով մը քննադատեց Գալֆաները՝ իբր կեղծ տիպոս իրեն վերագրելու ինքնագովութիւնը ընող : Իսկ հակառակորդները՝ իբր տաղանդ մը խեղդելու համար ստոր ջանքեր ընող : Բայց ինչ ըսենք որ , Վարդօն այս անաչառ վարմունքէն յետոյ ձեզ ծանօթ անմիտ ու անտրամաբան թղթակցութեան ամէն մէկ մասը հրատարակեց սիրով , մեր երկկեղուեան թերթին խմբագիրը , առանց երբէք անիրաւ կէտերուն դիտողութիւն մը ընելու : Ներկայ ընթացքն ալ առաջիններուն վրայ բարեբեցէք ըսի , ու խօսակցութեան վերջ տուի :

Եւ իրօք , ո՞ր լրջամիտ հայ , այդ և ասոր պէս անպատկառ զրպարտութիւններ , կիրքի արդիւնքներ առանց նողկալու պիտի կարգայ : Իսկ այս անգամուան խմբագրականը . — մի՛ հարցնէք :

ու Արթիւն խորեւելու սղանք չեն , եւ շատ պարագաներու մէջ , նոյնիսկ կը հաւասարին մեր Լոնտոնի պատուարժան մասնատմանը . չըջահայեաց քաղաքագետներուն :

Թէ ո՞վ էին այդ «գուրնէն եկած» սեւերիները , ի՞նչ գործ ունէին Պոլսոյ մէջ եւ ի՞նչ կողմէն տաճիկ կառավարութեանն : Մենք այդ հարցունքներով չենք զբաղիր սուստմ . ներկայ յօդուածին չըջանակէն դուրս են ատուց պատասխանելու : Մեր լոնտոնցի «Մարտ» պաշտօնակիցը արդէն ժամանակին պարզած է ատուց գոյնը , որակը եւ քանակը : Մենք ալ ներկայ յօդուածը գրած ժամանակնիս արդէն ինկատի ունեցանք մեր պատ պաշտօնակիցին հրատարակութիւնները : Աս չափը ըսենք որ այդ մարդիկը հիմակ ալ թուրքի «գործակալները» եղած են , ու այսօր Պատրիարք մը , վաղը կաթողիկոս մը պատրուակ բռնելով , կաշխատին անգամ մըն ալ Հայաստանը արիւն լուայ ընելու ստիժը ներկայացնել տաճիկին :

Թէ ի՞նչ շահ ունին այդպէս վարուելով , մենք ալ չենք գիտեր : Ի՞նչ որ ալ ըլլայ , արտասահմանի մէջ հաստատուած թուրքիս գործակալներուն զաւաղութիւնները պէտք է

«հարձու» ամենէն աւելի հետաքրքրութեամբ կարգացողներէն ենք , չեմ գիտեր , ո՞ր տողին , ո՞ր յօդուածին մէջ անոր բերուն հակառակ խօսած է : Խըժժանք , հը : Վասպուրականի մէջ թրքացող հայերը իրաւունքով նախատեղ չի նշանակել թէ որբերն ալ երեսի վրայ թողնելու է . ատանկ նպատակաւորներ . . . կը մըռնեն : Զէ՛ , անգահաւառակը , «Շարժում» ամենէն աւելի տեղ տուած Վառնայի «Որբախնամ»-ին գոյութիւնը յայտնելու : Ուրեմն ի՞նչը կը գրդէ այդ մարդուկը , Վարդօն ամեն մէկ տողը խժժելու . գրական կեղծարարի դերը առնելու — հա՞յը , կի՞րք . այնպէս չէ՞ : Ի՞նչ կը ցանկային որ խօսուէր «Շարժում»-ի մէջ . գովե՞լ թըքացողներն , քաջալերե՞լ թուրքախնամները , — այդ կոկորդիլոսի արցունք թափող կեղծ , զրպարտիչ — ազգասէր — գիմակաւորներուն տուած է , որոնք ամեն հինգ փարա տուղի հասցէին ձրի գովեստ կը շնային . . . , օրինակ տալ հա՞րկ է : Զէ՛ , ատանկ ցած ու ստրուկ նկարագիր մը ունենալ բնաւ չեն կրնար ներել «Շարժում»-ի ընթերցողները՝ անոր իմբագրին : Եւ . . . բնաւ չի պիտի ներէին ու պիտի «դատապարտէին» թէ «Շարժում»-ը փրօխած ըլլար այն լիբու անպատկառ զրպարտութիւնները թէ՛ «Վասպուրականի հայութեան անկեղծութիւնը կասկածի տակ դընդուները , գուցէ սրտովին ողին փճացումը այդ որբիկներուն , որոնք վաղը Հայաստանը պիտի լեցնեն . մինչդեռ իրենց համար ի հարկէ ի հաշիւ մեծ կառավարութեան մը , Հայաստանը պէտք է դատարկուի հայութենէն» . . .

մերկացնել : «Մարտ»-ի ճշմարիտ յեղափոխական մամուլը իր այդ պարտականութիւնը խճի մասը կը կատարէ , եւ շնորհիւ անոր էր որ հայ ժողովուրդը սխափեցաւ եւ իր ծոցէն վտարեց իր հանգստութիւնը խողովող վիժածները :

Դանր է վիճակնիս . պէտք է խոնակաւորներու ու յղջեղներու շարժիչք , առանց յուսահատելու : Անխելութեան անհրաքելի ապացոյցը է՛ն առաջ յուսահատութիւնն է :

Բայց ի՞նչ է խելքը : Ահա կարեւոր հարցում մը : Սե՞ղք է , լրջմտութիւն է հիմայ սու անանուն ոճրագործներուն Օրմանեանի եւ Արթիւնի ուղղած ապանաղիրը : Ի՞նչ կը յուսային այդ դաւաղիրները Օրմանեանը հրաժարեցնելով , եւ ի՞նչ ապանովութիւն ունէին . աւելի զէջ յայտնողի մը չի հանդիպելուն : Եթէ չի հրաժարի , ի՞նչ պիտի ընեն , պիտի սպաննուին : Բայց ե՞տք :

Այս «Ետք» : Եթէ ժընկելները ունէն ձեռնարկ ընել տալէ սուստայդ «Ետք» խորհած ըլլային , ո՞վ կը տարակուսի թէ ազգին վիճակը բոլորովին տարբեր պիտի ըլլար այսօր : Ժողովրդին ձեռքը բռն զանակ մը անգամ չի տուած , երկու կողմած արձանակով Օրմանեան մը սպաննելը

Այսքան առաջ պիտի երթար անամօթ , լիբու զրպարտութիւնը . այդ խեղճուկն ալ Դաշնակցութիւնը Ռուսիոյ ձեռքը գործիք կը նկատէ — ինչպէս իրենց ճիգութիւթ պետք — այդ մարդուկն ալ հայրենիքի ազատութեան համար ինչոյ հերոսները դաւաճան կը ճանչնայ . ու կը հրապարակէ՞ ալ առանց խպնելու . և ո՞ւր են մեր անկողմակալները . . . , որոնք անհատի մը գործած . . . ու թիւնները հրապարակուելուն համար «պատույ ատեն» կը պուռան . . . : Ըսել է թէ հակառակորդէ մը վրէժ լուծելու դեւական ցանկութեանէն բռնուած , ամեն միջոց ներելի կը գտնեն մարդուկները . ու . . . կը յանդգնին ամբողջ յեղափոխութիւնը զրպարտել , միջոցներ՝ որոնց պատասխանը միայն «թուքն» է . . . Եթէ մարդ չի պատասխանելու շախ դժուարագոգիւ կամ համբերող ըլլայ :

Չորս տողի մէջ քանի մը անգամ կը կրկնուի «որբերը կուսակցութիւն չունին» մինչդեռ այդ տողերը արտաբերող թերթը անոնց յաջորդ տողերը անձնական կիրքով , ատելութիւնով կը լեցնէ , է՛ . ի՞նչ անուն տալու է . . . : Իսկ յանցանք է խմբագրականի մէջ իբր օրինակ միայն բերուած Վաղգէնին ու Աւետիսեաններուն քով ուրիշներ ալ չի գրելը , ամբողջ հերոսներուն պէտք էր անպատճառ հո՞ն զետեղել : Իմ կարծիքով ամէն մարդ ազատ է , ինչպէս նաեւ ինք իր գիտցած անունները շարել , միայն ուրիշ անգամ հրապարակելու ատեն թող չի մոռնայ իր գիրքն ու տեղն ալ որոշել . արդեօք երկկեղուեան թերթին խմբագիրը որո՞ւ քով . . . դնելու

յեղափոխութիւն չէ , դաւաճանութիւն է : Ուսուցիկ ինքնագովութիւնները , անիմաստ ու դատարկ սպանալիքներով ժողովուրդը «նոր հալածանքի» ենթարկելու պիտուրան անպայտց չէ . ու կրնայ շատ աղետաբեր ըլլալ մեր ազգին համար : Պէտք է ամէն ջանք ընել , որպէս զի թուրքիս եւ իր դուրսի գործակալներուն դոճ չի տանք Հայաստանը եւ հայ ժողովուրդը :

Ազգին ընդհանուր գայրոյթը մեծ սպիկցութիւն ունի զէպքերու ընթացքին վրայ : Մենք այդ գայրոյթի թարթմանը հանդիսացանք «Պատեւրազմ»-ի ինկնելով , եւ զո՞ն ենք որ հայ ժողովուրդը գործնականապէս պոթկալով այդ անանուն դաւաղիրներուն դէմ : սարսափահար ստիպեց զանոնք կծկտել եւ խելքի պէս ծածկուիլ խաւարի մէջ :

Շուշաակ-յեղափոխական
Խմբագիր
Ա. ԱՌՄԻՏԱՐԵԱՆ

(Արտաստուած «Մարտ» Պատերազմի)

է. անշուշտ ապագան անոր ընթացքին յարմար տեղ մը պիտի տայ, քանի որ աս քանի մը տարուան ժամանակամիջոցին մէջ քանի մը տասնեակ անգամներ զամէլէնական շապիկը հագաւ, հակայեղափոխական զոյն առաւ...

Չէ՛, թէ բազմախնդրութիւն պէտք չէ և թէ անկում ու սուրնութիւն: Գէթ զրուած նիւթերը լաւ կը շնորհաբար դատողութիւնը ունենայու է: Արդէն լաւ առիթ մը ունին ձեռքերնին, թո՛ղ գրեն ու գրեն «նպատակաւոր»... և «թելադրեալ»: «Պատուոյ ատենաներուն» շուրջը, հոգ չէ թէ անոնք չունենան իրենց մէջ գործնականութեան ո՛չ մէկ գրոշմ, ու միայն թերթը լեցնեն. ահա՛ ջուրը ճամբան ձգելու միջոցը: Որքերու անունին պիղծ գրիչներ թող չի դպչին...

ԲԱՁԷ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

«Շարժումի ներկայ թուին հետ յաւելուած մը կայ. Տ. Պ. Սիրէմճեանի. «Պատուոյ ատենան» վերնագրով:

— Տ. Բիւզանդ. Պաղճեան ով որ է թող հաճի երթալ Փասթիա խան Ն. 221 դերձակ եղբարք Կարապաճաքեանի որոնց քով նամակ մը ունի:

— ԿԸ ՓՆՏՈՒՄԻ. — Խարբրիցի Բիտրիկ զի զացի Պ. Յակոբ Չարանեան մէկ տարի կամ վեց ամիս առաջ Պուրկազ քարին օճախը կաշխատէր եւ այժմ մեր քանի նամակներն անպատասխան մնալուն ուր ըլլալը չի գիտցուիր, ով որ տեղեկութիւն ունի թող գրէ հետեւեալ հասցէին:

Արմենակ Ոսկերիչեան (Քղեցի) Թիւ 3 Ռիվեր Սայրա Փլէշ Բէյմպրիճփորթ մէս Ամերիկա

—)(—

Ահաւասիկ երկրորդ յօդուածը՝

Բ.

ՃՇՄԱՐԻՏ ՅԵՆԱՓՈՒՄԻՒԹԻՒՆԸ

Ազգային յեղափոխութեան տարեգրութեանց մէջ նոր թուական մըն է որ կը բացուի այսօր: Խանդավառ ու զգայնիք չըջանի մը ազիտայի մտլուցքներուն յարածամ պայթումէն ետքը, այսօր, առաջին անգամ հայ ժողովուրդին սիրտը վիմաառող տարակոյտի սարսուռները կը փարատին. աղօտ լոյսի մէջ բլշակնած իր աչքերը, անպարոյթ ծամածոութեանց մէջ զոտածեալ վշտէն ցամքած հողին կը յստակուի, կը գտնէ իր անյողգող տոկոսները, զինքը բնորոշող խոնկ ու չըջանալիս նկարագիրը, եւ կեզր. վարչութեանս անվնաս ջանքերուն շնորհիւ, կը սկսի հետզհետէ թափանցել հասարակ մշտքերու անթափանց պարունակները: Վճիտ տեսողութեան սանձաններէն սաւառնաթիւ հայ ժողովրդին ուշիմ մասը, կուսակցութեանս կեդրոնին շուրջը հաւաքուած ողջամիտ քաղաքագէտներու առաջնորդութեամբ, անարգել կը սուզի աշխարհային դիւանագիտութեան զահաւանդներուն

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ապրիլի 22ին շաբաթ օրը, Թէոդոսիա հայոց եկեղեցւոյ մէջ կատարուեր է Այվազուլսքի թաղման հանդէսը. թաղման հանդէսէն առաջ Այվազուլսքի մարմինը դրուեր է իր նկարարահին մէջ, որու պատերը զարգարուած են մեռած ստեղծողի անմահ գործերով:

Իացի հայ և ուս հոգեւորականութեանց դազաղի վրայ աղօթեր են մահմէտական և հրէա հոգեւորականութիւնը:

Թաղման հանդէսին զանազան կողմերէ պատգամաւորներ ներկայ գտնուեր են:

— Պոլսոյ թերթերը կը գրեն թէ Գլիի մօտերը հայ դիւղի մը բնակչները 70 ընտանիք, քահանայով խաչով ու խաչավառով սովէն ստիպեալ գիմեր են դէպի Եփրատ իրենց լեանքին վերջ տալու. սակայն այդ միջոցին Պօլսէն հարուստ Բղեցի մը վերադարձած ըլլալով, եղելութիւնը կիմանայ, կը վաղէ անոնց քով, ստակ կը բաժնէ աղաղակելով թէ՛ Աստուած զիս զրկեց զձեզ յիւրկելու, վերջը կերթայ մօտակայ քիւրտ գիւղը շէյխէն ցորէն կանէ և յուղուած շէյխի հետ միասին կը բերէ դիւղացիներուն կը բաժնէ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ճաբոնը մեծ պատրաստութիւններ կը տեսնայ և պատերազմական նաւեր շինել կուտայ: Կըսեն թէ այդ բոլոր պատրաստութիւնները Ռուսիոյ գէժ պատերազմի լու համար են:

— Անգլիոյ զօրքերու թիւը

մէջ, ուր գահավիժել փորձող ազգը յաւէս կորսուած կը նկատուէր երբեմն աշխարհի համար:

Ահա այս խորհրդածութիւնները կը թելադրէ մեզի այն սպանագիրը զոր կուսակցութեանս Բիւզանդիոն մասնախումբը ուղղած է Օրմանեանին, եւ որուն լուրը եւրոպական թերթերը վերջերս հաղորդեցին մեզի:

Չինացի համբաւաւոր գիտնական Տօքթ. Նիւլը, որ այժմ Պօլս կը գտնուի, խիստ շահեկան յօդուած մը գրած է չինական «Տիփոմթ» հանդէսին մէջ, ուր անպատում գովասանքներ շտաշած է կուսակցութեանս հասցէին եւ մեր այս առաջին անշահախնդիր գործունէութիւնը իր բարեացակամ գնահատման արժանացուցած: Մեր յաջորդ թուին մէջ կը խոստանանք սոյն յօդուածը ամբողջովին թարգմանելով մեր ընթերցողներուն ներկայացնել:

Ուրեմն կարծէ որ հայ ժողովուրդը աւելի քան երբեք անդրադառնայ մեր կուսակցութեան այս խոնկ ու փրկարար քայլին վրայ ու հասկնայ թէ ի՞նչ անզուգական նշանակութիւն ունի ան մեր յեղափոխութեան պատմութեան մէջ:

Կուսակցութիւնս, սակայն, ներ-

թրանսվալի մէջ 200,000 ի կը հասնի: Խորվեկիացի սպայ մը կը հաղորդէ թէ շուտով Թրանսվալը բոլորովին պիտի թաղուի. Բրետտրիան ալ շուտով անգլիացիները ձեռքը պիտի իյնայ, որովհետեւ լաւ չէ ամբայտած: Քրիւկէր արդէն յուսահատ վիճակի մը մէջ կը գտնուի:

— Թուրքիոյ նշանաւոր պաշտօնեաները շարունակ կը փախչին. մօտ օրերս Պարսիքէն փախած է փոխ ծովակալ Համտի պէյ: Փախող փախողի է:

Մուխթար փաշան ալ, Եգիպտոսի քովիսէր, Սուլթանին խիստ կերպով դրուած հրաժարագիր մը զրկած է: Կը վախցուի թէ արտասահմանի մէջ գտնուած շատ մը թուրք պաշտօնեաներ, որոնք ինքզինքնին արդէն ապահոված են, հետեւին Մուխթարի օրինակին:

Ա Ձ Դ

Շարժումի խմբագրութեան մէջ կարելի է բաժանորդ գրուիլ Փարիզ հրատարակուող «Հայկական ժողովրդական երգերի հաւաքածոյին»:

Պուլկարիոյ համար պայմանները. Տարեկան 6 գրք 32 Քրանք կարելի է մաս մաս վճարել: Ա. գրքը ստանալուն 12 Քրանք Բ. գրքը ստանալուն 10 Քրանք Գ. գրքը ստանալուն 10 Քրանք Ամէն մէկ գրքը ստանձին 6 Քրանք

Մ Ա Ն Կ Ա Պ Ա Ր Տ Է Չ

Տիպին Ե. 20ՐԱՍԱՆԻ (Ֆիլիպի)

Կընդունուին 4—7 տարեկան մանուկներ, դասերը առաւօտեան 9—12 եւ կէս օրէն վերջ 2—5:

Հետո. բնակող մանուկները ճանքերին կրնան մանկապարտկչին մէջ ընել և մինչեւ դասերուն սկսուիլը մասնաւոր հսկողութեան տակ խաղալ:

Վճարը՝ ամսական ութը լիվ:

—)(—

կայ սպանագիրը զրկելէ առաջ, երկար խորհրդակցութիւններ ունեցաւ, քննեց պարագաներով, կռեց եւրօպական դիւանագիտութեան ծանրութիւնը, չափեց անոր երկայնութիւնը. ութը օր Սալիզպրիի դռան առջեւ սպասեց, 40 օր Հայա-Բարքի շուրջը բուրեցաւ, եւ հազիւ համարձակեցաւ, երկար վիճարանութիւններէ ետքը, այս որոշման յանգիլ:

Քանի մը խօսքով, պարզեց մեր շարժառիթները:

Հայ ժողովուրդը, շնորհիւ մեր եւ մեր Մարտի պաշտօնակցին քարոզներուն, քանի մը տարիէ ի վեր մեռելական անշարժութեան դատապարտուած էր:

Սկզբունքով, չէինք ուղեր Թուրքիոյ հետ հաշտ քաղաքականութեան մը հետեւիլ. բայց պէտք էր խոհեմ ըլլալ ու այնպէս ձեւացնել:

Ուստի երեք տարուան սպասումէ մը ետքը, հարկ էր դաս մը տալ Օրմանեանի եւ ազգի՛ն ալ ցուցնել թէ մենք ո՞վ ենք:

Եւ ահա Լոնտօնի, Ազգ. Պաշտ. կեդրոնը՝ անցեալ շաբթու եկաւ իր տարիներու աշխատութեան երախայրիքը ցոյց տալ հայ ազգին: Օրմանեանի սպանագիրը ուսմբի մը պէս— մեզա՛յ, այդ բոլոր սրբապղծութիւնէ կուսակցութեան համար— հաւկիթի մը պէս հրապարակը գրողեց: Ամբողջ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Պատիւ ունիմք ծանուցանել արգոյ հայ հասարակութեան թէ, երկուսը Որբախնամ ընկերութիւնը Ապրիլ մէկէն սկսած է իր բաժնեգրները և մասնաւոր նուէրները դունձնի և ընդունիլ:

Ուստի հրապարակու կը յայտարարեմք և լիայոյս եմք որ թէ անլոյս և թէ արտասահմանի ընդհ. հայութեան չի պիտի զլանան իրենց նիւթակուն և բարոյական աշակցութիւնը և օգնութիւնը, որովհետեւ սոյն պէտքը արդի ժամանակաւ անհրաժեշտ և վստահեցնէն էն կարեւորագոյնն է. այն որբիկներն են որ պիտի կազմեն ապագայ հայութեան հաստատուն կոտանք:

Մնամք Յարգանք

Ի դիմաց գործ. ժողովոյ երկուսը Որբախնամ ընկերութեան «Վասպուրականի»

Ատենադպիր Վ. Ատենապետի Թ. Կ. Ճանկիլիւսն Թ. Բարսաւեան Վառնայ, 17 Ապրիլ

Հասցէ

Թ. Կ. Ճանկիլիւսն Վառնա (Պուլկարիա)

Պէտք է աւելցնել նաեւ ընկերութեան վերաբերիլն:

Թ. Գ. — Ընկերութեանս կնիքը չը կրող ընկալուպիներու վճարուած ստակներու վարչութիւնը պատասխանատու չէ:

Նոյն

ԹԱՏՐՈՒՆ «ՍԱՆԹՐԱԼ»

«Վէտէլլօ» հայ դերասանական խումբը, վաղը գիշեր, Մայիս 4, պիտի ներկայացնէ առաջին անգամ ըլլալով՝ մեծաւ պատրաստութեամբ՝ «Լէպլէպիճի Հօրհօր աղա» օրէրէթ 3 արար:

Երաժշտութիւն բարեխիշտակ մեծանուն երաժշտապետին Տիգրան Չուհաճեանի:

Печатница „Врачимость“ Варна

Դիւանագիտութիւնները իրար անցան Պօլս խոնկած էր: Համիլաւութեան պէս, Սուլթանը, Աստուծոյ շուքը Օրմանեանի մինչեւ օտքերը խոնարհած էր, եւ քիչ մնաց Հայաստանը հայերու պիտի թողուր եթէ ժրնէկցիներուն զինակիր խմբերը մէջտեղ ելած չըլլային:

Եւ սակայն դեռ բոլորովին յայտնիս չենք կարած:

Օրմանեան իր տան մէջ փակուած կը մնայ, եւ Արթիւր կը սարսուռ երբ կը յիշէ, կարմիր կնիքը: Ու ապահով ենք որ, եթէ քանի մը օր ալ սեւէ այս պատրիարքական խնդիրը այլ եւս Հայաստան իր կապանքներէն իսպառ փրկուած կարելիէ նկատուի:

Ահա ճշմարիտ յեղափոխութիւնը: Առաջն աստի, առանց ուժանակի կամ զէնքի, Մարտի խմբագրութիւնը, շնորհիւ իր փորձ ու լուրջ դիւանագէտներուն, յաջողեցաւ թիւթի կտորով մը եւ կարծիք միախոնով ազգը պայծառացնել:

Կեցցէ՛ յեղափոխութիւն:

Կեցցէ՛, Ազգ. պաշտպանութեան կեդրոն:

Շուշտակ-յեղափոխական Խմբագիր

Ա. ԱՌՄԻՏԱՐԵԱՆ

(Արտաստպուած Մարտի Պատերազմէն):

—)(—